ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

« 3 » հունիսի 2016 թ. N 2

ՈՐՈՇՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի N 1 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի 2016 թվականի ապրիլի 18-ի N 109-Ա հրամանով հաստատված հավելվածի 3-րդ, 15-րդ կետերը՝ հաշվի առնելով, որ «Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպության մասնակցությունը կարող է էական նշանակություն ունենալ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի ընթացիկ աշխատանքների համար.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե՝

1. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահի 2016 թվականի մայիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու վերաբերյալ դիմումները բավարարելու և մերժելու, խորհրդի անդամների առավելագույն թվաքանակը և անհատական կազմը հաստատելու մասին» N 1 որոշման /այսուհետ՝ Որոշում/ 1-ին կետում «քսանմեկ» բառը փոխարինել «քսաներկու» բառով:

2. «Հայաստանի Հանրապետության արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպությունը (համաձայնությամբ) ընդգրկել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին կից հասարակական խորհրդի կազմում:

3. Որոշման N 3 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 22-րդ կետով. «22. Վահե Ղազարյան («Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն):

4. Ուժը կորցրած ճանաչել Որոշման N 2 հավելվածի 1-ին կետը:

Նախագահ՝ Ս. Կարապետյան